

ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ*

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

karine.arakelyan.2016@mail.ru

DOI: 10.52853/18294073-2021.3.27-198

ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԵՐԳԻԾԱՎԵՊԵՐՈՒՄ

Բանալի բառեր¹ երգիծանք, վեպ, լեզու, խոսք, առած, ասացվածք, ոճ:

Ներածություն

Առաձները, ասացվածքները, թևավոր խոսքերը, դարձվածները յուրաքանչյուր լեզվի անկապտելի հարստությունն են: Սրանք հիմնականում ունեն ժողովրդական ծագում, խտացնում են ժողովրդի դարավոր փորձը, իմաստությունն ու կենսափիլիսոփայությունը և հաճախ հնչում են իբրև պատվիրաններ: Սրանց միջոցով հնարավոր է թափանցել ժողովրդի, կարելի է ասել, հոգու խորքը, այսինքն հասկանալ նրա հոգեկերտվածքը, պատմությունը, մտածողությունը, քաղաքակրթական աստիճանը և այլն: Նշվածներից զատ սրանք լավագույնս արտահայտում են ազգային լեզվամտածողությունը, և յուրաքանչյուր լեզվի ուսումնասիրություն խիստ թերի է առանց այս միավորների ուսումնասիրության: Այս առնչությամբ ռուս մեծ բանաստեղծ Ա. Պուշկինը գրել է. «Հինավուրց երգերի, հեքիաթների, առածների ուսումնասիրությունը անհրաժեշտ է ռուս լեզվի հատկությունների կատարյալ իմացության համար... Ի՞նչ ոսկի են ռուսական առածները... Ի՞նչ հարստություն, որպիսի բանականություն, ի՞նչ իմաստ կա մեր ամեն մի ասացվածքի մեջ»¹:

Առած-ասացվածքներն իրենց ուրույն դերն ու կշիռն ունեն գեղարվեստական խոսքում, և ստեղծագործող անհատները՝ հատկապես արձակագիրները, հաճախ են դիմել սրանց օգնությանը՝ խոսքը հարստացնելու և ոճավորելու

* Հոդվածը ներկայացվել է 09.02.21, գրախոսվել է 09.02.21, ընդունվել է տպագրության 19.11.21:

¹ Տե՛ս **Андреев** 1938, 30–32.

Առած-ասացվածքների լեզվաոճական առանձնահատկությունները...

նպատակով: Դա հատկապես ցայտուն է տարբեր գրական երկերի հերոսների պարագայում, և խոսքը շատ է մոտեցնում ժողովրդականին: Հիշենք մի հատված Հովհաննես Թումանյանի հանրահայտ պոեմից.

**Եկան իրարու, խոսք խոսքի հասավ,
Չարին մի քանի կոշտ խոսքեր ասավ.
Դե, մարդիկ երբ որ կռիվ են անում
Մեջքեղ փըլավ չեն իրար բաժանում²:**

Երբեմն գրողները առածը կամ ասացվածքը դարձրել են ստեղծագործության վերնագիր, ինչպես Գրիգոր Զոհրապը, որն իր նորավեպերից մեկն անվանել է «Առջի սեր, առջի բարի»:

Առած-ասացվածքները մեծ կիրառություն ունեն նաև երգիծաբանական գրականության մեջ: Սրանք ունեն այլաբանական նշանակություն և, պայմանավորված այդ հանգամանքով, կարող են խոսքին բավական մեծ չափով պատկերավորություն հաղորդել: Քանի որ այլաբանությունը պահանջում է վերծանում, այդ վերծանումը կարող է լինել նաև երգիծական բնույթի՝ հումորային, հեգնական և այլն՝ կախված հանգամանքներից: Հիշենք մի դրվագ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Թատրոնից»: Թատրոն անունով հայկական թերթը տպագրում է տեղեկություն՝ տեղադրված սև շրջանակի մեջ, որով «բարեխնամ» կառավարության ուշադրությունն է հրավիրում Մուշի բնակչության անմխիթար վիճակի վրա, թե ինչպես է հարստահարվում, կեղեքվում, հաճախ սպանվում և ունեզրկվում տեղի հայությունը: Երևույթներ, որոնք միանգամայն «սովորական» էին դարձել սուլթանական Թուրքիայում, սակայն որոնց մասին բարձրաձայնել չվարանեց մեծ երգիծաբանը:

Պատասխանը չի ուշանում: Տպագրական տեսչության կողմից ստացվում է ծանուցում, համաձայն որի «Թատրոնի» գործունեությունը դադարեցվում է մեկ ամիս պայմանաժամկետով: Իբրև «պատճառ», ի միջի այլոց նշվում է թերթի տպագրած նյութի սև շրջանակը, ինչպես նաև «հերյուրանքները» և «չափազանցությունները»: Կատարվածից «խրատված»՝ «Թատրոնի» խմբագիրը հրահանգ է ուղարկում տպարան, «որ թերթերնուս մեջ որչափ գիծ կայ նե՛ ամենն ալ դուրս վանե՛... Ասոր ի պատասխան՝ տպարանապետը հարցուցած էր, թե գիծն հանե՛, տեղը ի՛նչ դնե՛: Գիծերն հանե՛, տեղը ինչ կուզես նե՛ ան դի՛ր, ըսինք իրեն»³:

² Թումանյան 1958, 39:

³ Պարոնյան 1954, 93:

Առաքելյան Կ.

Այս զավեշտական իրավիճակը, որը մարդկային ուղեղում տեղավորվող որևէ բացատրություն չունի, Պարոնյանը բացատրում է առաժի օգնությամբ՝ գրելով. «Կեռզ կեորտյոյինտէն գորգար, կըսէ տաճկական առածը»⁴, որ նշանակում է՝ աչքը տեսածից է վախենում:

Առաժի միջոցով հեղինակը խտացնում է ասելիքը, ոճավորում է խոսքը՝ դրան հաղորդելով սարկաստիկ և, ինչու չէ, խորը ողբերգական երանգ, իսկ այս ամենին լրացուցիչ թափ է հաղորդում թուրքերենով մեջբերելը, քանի որ այս այլանդակության պատասխանատուն հենց թուրքն է:

Նմանատիպ մի դեպքի հանդիպում ենք Խրիմյան Հայրիկի՝ Նիկոլայ կայսերն ուղղած նամակում՝ գրված հայ ժողովրդի համար չափազանց դրամատիկ մի ժամանակաշրջանում: Ստացվել էր ցարական հրամանը Հայ Առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման մասին: Խրիմյան Հայրիկը ընդդիմանում է այս հրամանին: Հայրապետին սատար է կանգնում ողջ ժողովուրդը: 1903թ. Խրիմյանը նամակով դիմում է ցարին, որում հայտնում է, որ ցանկանում է դուրս գալ ռուսահպատակությունից: Վեհափառը խոսքն ավելի ազդու և հատու դարձնելու համար դիմում է առաժի և այն էլ ռուսական առաժի՝ գրելով. «Ռուսաց առածն ասում է, թե՛ հինգ և թե՛ եօթը խփած ապտակի պատասխանատուութիւնը միևնոյն է: Եւ վերջապէս այսքան բարբարոսական վերաբերմունքից յետոյ այլ ևս ինչ ունինք սպասելիք, որ մեր խօսքին քաղաքավարութեան տօն ու ձև տանք»⁵:

Առած-ասացվածքները Նշան Պեշիկթաշլյանի երգիծավեպերում

Սփյուռքահայ նշանավոր գրող, երգիծաբան Նշան Պեշիկթաշլյանն իր երգիծավեպերում նույնպես օգտվել է առած-ասացվածքների անսպառ շտեմարանից և օգտվել է տարբեր ու շատ հետաքրքիր ձևերով: Երբեմն Պեշիկթաշլյանն առածը կամ ասացվածքը կիրառում է որպես եզրակացություն կամ բնաբան՝ արտահայտված մտքերի համար: Այսպես է «Մեծ ծաղրածուն» վեպի մի դրվագում, որտեղ տարեց հերոսը մտորում է իր անցած կյանքի մասին: Առհասարակ ծերության մասին առած-ասացվածքները փոքր թիվ չեն կազմում, և սա չի վրիպել հետազոտողների հայացքից, ինչպես. «Արտահայտելու համար այն միտքը, թե ծերության հասակում ֆիզիկական ուժերի սպառման ու ջլատման հետևանքով մարդն ընկնում է ծանր և կաշկանդված վիճակի մեջ, ժողովուրդն ասում է. «Ծերություն-գերություն»: Ոչ պատահական ձևով

⁴ Պարոնյան 1954, 93:

⁵ Վալերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2020, 560:

Առած-ասացվածքների լեզվաոճական առանձնահատկությունները...

գործածված մի հատիկ «գերություն» բառն այստեղ լիովի տալիս է ծեր մարդու վիճակի բնութագիրը, որովհետև այն հիշեցնում է գերու համար այնքան բնորոշ նմանօրինակ կացությունը»⁶:

Պեշիկթաշյանի հերոսի մտորումների հիմքում Աստվածաշնչի խոսքն է. «Հոգիս յօժար է, բայց մարմինս՝ տկար»⁷: Այս խոսքը Քրիստոսն արտասանել է Գեթսեմանի պարտեզում ձերբակալությունից շատ կարճ ժամանակ առաջ: Դարերի ընթացքում այն ձեռք է բերել ասացվածքի արժեք և կիրառվել է միանգամայն տարբեր խոսքային իրադրություններում, նաև այնպիսի իրադրություններում, որոնք շատ հեռու են իր սկզբնական իմաստից՝ արտահայտված Գեթսեմանի պարտեզում: Այդպես է նաև այս դեպքում. «Տարեցը կրնայ ըսել ամենայն իրաւամբ. – Երբ երիտասարդ էի, ասպարէզը իմս էր, սակայն ոչինչ գիտէի: Հիմա ամէն բան գիտեմ, սակայն ասպարէզ չունիմ: Հոգիս յօժար է, բայց մարմինս՝ տկար»⁸:

Այսպիսի ինչ-որ իմաստով նախաբանին հաջորդում են «իմաստասիրական» խորհրդածություններ դարձյալ երգիծական բնույթի, որոնք նույնպես կազմված են առած-ասացվածքների սկզբունքով և գուցե հայտ են ներկայացնում այդպիսին դառնալու: Լեզվաբանության մեջ կա դիպվածային հոմանշություն հասկացությունը, ինչի մասին խոսելիս մասնավորապես նշվել է, որ «Իմաստների մերձեցումը, որը հանգեցնում է այսպիսի հոմանշության, տեղի է ունենում երկու ճանապարհով՝ իմաստային ենթատեքստի օգնությամբ և բառերի հնչյունական մերձավորության հայտնաբերման ճանապարհով»⁹:

Մեր նշած միավորները կարելի է անվանել դիպվածային առածներ կամ ասացվածքներ, այսպես. «Մարմինը հին, քարքարոտ, ճեղքրտուած լեռ մըն է, իսկ հոգին՝ հրաբուխ, ամէն օր բռնկող, բազմալաւ: Մարմինը հին տաճար, մէջը հոգին՝ նոր սուրբ կամ նոր սատանայ: Մարմինը հին պալատ, մէջը հոգին՝ նոր թագաւոր: Մարմինը հին զանգակատուն, մէջը հոգին՝ նոր զանգակ: Մարմինը հին ախոռ, մէջը հոգին՝ նոր վագերածի» (106):

Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա է պատկերավորման զանազան միջոցների առատություն, հատկապես հակադրությունների: Հակադրությամբ ոճական արտահայտչամիջոց է, որով հակադիր իմաստ ունեցող բառերի գործա-

⁶ Ղանալանյան 1960, LXXVI:

⁷ Աստուածաշունչ մատեն, Նոր Կտակարան 1997, 30:

⁸ Պեշիկթաշյան 1942, 106: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ:

⁹ Пелевина 1980, 49.

Առաքելյան Կ.

ծուխամբ հակադրվում են առարկաներ, հատկանիշներ, երևույթներ: Վերը բերվածները կազմված են մարդու ներհակ տարրերի՝ հոգու և մարմնի, նաև հնի ու նորի հակասություններից: Հակադրությունն առհասարակ լայն կիրառություն ունեն առած-ասացվածքներում, ինչպես նաև դարձվածքներում, հիշենք. «Մոտիկ հարևանը լավ է հեռու բարեկամից», «Թուկի երկարն է լավ, խոսքի՝ կարճը», «Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա» և այլն: Քննության առարկա հատվածում առկա պատկերավորման մյուս միջոցները՝ մասնավորապես այլաբանությունները, չափազանցությունները ևս ծառայում են հակասություններն ավելի ցայտուն ու արտահայտիչ դարձնելու նպատակին: Այսպիսով, հակադրությունն առավել ընդգծված են ներկայացնում հերոսի հոգեվիճակը՝ դրա բոլոր երգիծական ու ողբերգական կողմերով: Միանշանակ պետք է համաձայնել, որ «Առածների ու ասացվածքների մեջ իմաստի ուղղակի առման հետ միասին, այս կամ այն չափով, արտահայտված է նաև նրանց փոխաբերական առումը... Այս տեսակետից էլ սրանք մոտենում են դարձվածքային այն բառակապակցություններին կամ արտահայտություններին, որոնք կազմությամբ կարճ ու դիպուկ նախադասություններ են»¹⁰:

Մեր բերած օրինակներում հակադրությունը կազմվում են հականիշ զույգերի միջոցով: Կան դեպքեր, երբ դրանք կազմվում են հականիշ եղյակների միջոցով՝ ստեղծելով, եթե կարելի է ասել, «եռաստիճան» հակադրություն, ինչպես նույն ծեր հերոսի դեպքում. «Ժամանակը իր անողոք կատակները սարքեր է ամենուրեք, վերն ալ, վարն ալ ու մանաւանդ մէջը» (104):

Իր երգիծավեպերում Պեշկյթաշյանը կարծես առածի կամ ասացվածքի արժեք է տալիս միավորների, որոնց կարելի է դարձվածի դիպվածային տարբերակ համարել: Ունենք «առյուծի կաթ կերած լինել» դարձվածը, որ նշանակում է «անվախություն, քաջություն ցույց տալ, հանդես բերել»¹¹:

«Ընկեր Փարոս» երգիծավեպի հերոսը՝ Փարոսը՝ փուչ ու փառամոլ մի կոշկակար, ամբողջ կյանքում դեգերում է կուսակցությունից կուսակցություն, ինչը խիստ զայրացնում է կուսակցական նախկին ընկերներին, և որոնցից մեկը Փարոսին ասում է. «Փարոսը հոկճի, համայնավար: Է՛, դուն խենթի կաթ ծծած ըլլալու ես» (19): Ինչպես տեսնում ենք, այստեղ խենթանալու գաղափարն արտահայտված է մի կապակցությամբ, որ կազմված է վերը նշված դարձվածի նմանողությամբ:

¹⁰ Մուրվալյան 1959, 45:

¹¹ Բեդիրյան 2011, 136:

Առած-ասացվածքների լեզվաոճական առանձնահատկությունները...

Նույն հերոսի՝ Փարոսի խոսքում հանդիպում ենք մեկ այլ հետաքրքիր արտահայտության, որը կարելի է Աստվածաշնչի երկու տարբեր խոսքերի յուրօրինակ «համադրություն» համարել: Առաջինը Եսայու մարգարեության «Նոր երկինք, նոր երկիր» հատվածից է և ունի վախճանաբանական իմաստ. «Յայնմ ժամանակի գայլքն եւ գառինք ի միասին ճարակեսցին»¹²: Երկրորդը կարդում ենք Մարկոսի Ավետարանում, որտեղ Հիսուսն օրհնում է մանուկներին. «Թոյլ տուք մանկուոյդ գալ առ իս»¹³:

Այս խոսքերը միաձուլելով իր կարճ ուղեղում՝ ընկեր Փարոսն անում է իր հերթական «հեղափոխական» խորհրդածությունը՝ դարձյալ հակոտնյա կուսակցությունների համատեքստում, և փորձում է դասեր կամ խրատներ տալ գյուղի դպրոցականներին. «Թոյլ տուէք գառնուկներին եւ գայլուկներին, որ իմ քովը գան» (59):

Պեշկիթաշյանը ժողովրդական խոսք կիրառել է նաև երգիծավեպերից մեկի վերնագրում: Այն կոչվում է «Մուրատ Տավիտ կամ միութինը զօրութին է»: Վեպի հերոսը՝ դերձակ Մուրադ Դավիթյանը, սիրում է կրկնել այս խոսքը՝ դրան տալով, սակայն, բոլորովին այլ ենթատեքստ: Ազգային միաբանության մասին ճամարտակելն այս արհեստավորի համար քաղաքական տարբեր հայացքների տեր հայերի շրջանակներից հաճախորդներ գտնելու միջոց է: Այդ պատճառով նա վերը նշված արտահայտությանն ավելացնում է իր սեփական մեկնաբանությունը և պատից կախում տախտակ, որի վրա մեծատառերով գրված է.

***Միութինը զօրութին է,
Զօրութինը զրահուիլ է,
Զրահուիլը հագուիլ է (80):***

Այս զավեշտական կարգախոսը դժբախտաբար չի օգնում հերոսի մանրիկ խորամանկությունները հաջողությամբ պսակելուն, քանի որ, ինչպես դիպուկ կերպով նկատում է մի բարեկամ. «Քեզի պէս հայը կրնայ ամէն ազգ խաբել, սակայն չի կրնար Հայ մը խաբել: Քեզի պէս Հայը կրնայ ամէն ազգէ խաբուիլ, սակայն չի խաբուիր Հայէն» (94):

Առած-ասացվածքներով մասնավորապես հարուստ է «Համառոտ պատմություն ասավուտներու» երգիծավեպը: Սա համառոտ պատմությունն է երևակայական մի ժողովրդի, ինչը հեղինակը բացահայտում է վեպի վերջում,

¹² Աստուածաշունչ մատեան, Հին Կտակարան 1997, 770:

¹³ Աստուածաշունչ մատեան, Նոր Կտակարան 1997, 46:

Առաքելյան Կ.

որտեղ նաև իր խորհրդածություններն է անում պատմագիտության մասին՝ դարձյալ համեմված ասացվածքով և երգիծական երանգով. «Պատմութիւնը կրկնութիւն է»: Նաեւ ասերախտ գիտութիւն: Ապերախտ է... մանաւանդ անոր համար, որ հակառակ հարստացած ըլլալուն՝ մարդկային արիւններով չէ եղած մեզի բարի դաս մը: Գրածս խտացումն է ընդհանուր ազգաց պատմութեան մէջ գտնուող ողբերգութեան, ինչպէս նաեւ կատակերգութեան... Ես գրեցի ժպտելով, սակայն կարելի է լալով ալ կարդալ» (155):

Այս վեպում առկա առաձները յուրահատուկ են նրանով, որ պատկանում են հեղինակի գրչին և հորինված են հատուկ ասավուտների կյանքն ու կենցաղը պատկերելու համար: Ինչպես նշում է հեղինակը. «Ժողովուրդը իր անգերազանցելի հանճարով կ'արհամարհէր ու կը հեգնէր իր արքան: Ասավուտ առաձները ապացոյցն են մեր խօսքին» (137):

Սրանք լեզվական չափազանց գունեղ միավորներ են և հարուստ պատկերավորման ամենատարբեր միջոցներով, որոնցում իր ուրույն տեղն ունի չափազանցությունը: Պետք է նշել, որ չափազանցությունն առհասարակ խիստ լայն տարածում ունի ժողովրդական խոսքում: Կան ժողովրդական բազմաթիվ արտահայտություններ ու դարձվածներ, որոնց հիմքում չափազանցությունն է, և որոնք լեզվական երևույթ են, ինչպես «լուն ուղտ շինել», «քիթը երկինք հասնել», «ծիծաղից մեռնել» և այլն:

Ասավուտների կյանքի մասին առաձներով կամ առանց դրանց խոսելիս՝ Պեշկեթաշյանը հիմնականում շեշտը դնում է երկրի առաջնորդների, թագավորների, կառավարիչների ապիկարության, ապաշնորհության, շատ հաճախ անհույս հիմարության, նույնիսկ խելագարության՝ նաև հանցավորության և այս ամենի արդյունքում ժողովրդի կրած տառապանքների վրա: Հիշենք այս գաղափարը չափազանցությամբ արտահայտող մի քանի առաձ. «Երբ թագաւորը պաղ առնէ, ամբողջ ժողովուրդը կը տառապի հարբութիւն: Երբ թագաւորին աչքին մէջ երկու կաթիլ արցունք ըլլայ, ամբողջ ժողովուրդը միլիոնաւոր թաշկինակներու պէտք կ'ունենայ... Երբ թագաւորը իշու մը նայի, այդ աւանակին գինը տասը արծաթ կը բարձրանայ: Երբ թագաւորը ջորիի մը նայի, այդ ջորին կը փոխուի ազնիւ ձիու» (137–138):

Ինչպես արդեն նշել ենք, առաձներում հաճախ են հանդիպում հակադրույթներ, ասավուտներին նվիրված առաձները բացառություն չեն: Այստեղ հակադրությունը դարձյալ թագավորի ու ժողովրդի միջև է, ինչպես. «Թագաւորը աշխատասէր է, երբ մատը մատին դպցնէ, իսկ ասավուտ գիւղացին ծոյլ է, երբ օրը տասը ժամ աշխատի: Գիւղացին երբ մէկուն քիթը արինէ, ազգա-

Առած-ասացվածքների լեզվաոճական առանձնահատկությունները...

տեաց է. թագաւորը երբ քանի մը հարիւր հազար հոգիի արիւնը թափէ, մեծ հայրենասէր է» (138):

Առած-ասացվածքների կազմության մեջ մեծ մասնակցություն ունեն փոխաբերությունները: Փոխաբերության մի ձև է դիմառնությունը, որն առաջանում է, երբ «անշունչ առարկաները շնչավորում, նրանց վերագրում ենք կենդանուն կամ մարդուն հատուկ հատկանիշներ, անշունչ առարկաներին ու կենդանիներին՝ բանականություն և խոսելու շնորհ»¹⁴:

Այսպիսի երևույթ է առկա հետևյալ առածում, որտեղ անշունչ առարկային՝ ամանին, վերագրված է մարդուն հատուկ հատկանիշ՝ հպարտություն. «Երբ թագաւորը թքնէ ամանի մը մէջ, այդ ամանը կը ճաթի հպարտութենէն» (137):

Հետաքրքիր փոխաբերություն է առկա մեկ այլ առածում. «Թագաւորը շատ կիներ կը սիրէ «ժողովուրդի հայր» կոչուելու համար» (138): Այստեղ կծու հեգնանք է դրսևորված մի երևույթի հանդեպ, որ խորը արմատներ է ունեցել տարբեր հասարակարգերում: Հնում թագավորներին հաճախ աստվածացրել են, նոր ժամանակներում երկրի ղեկավարին երբեմն հենց «ժողովրդի հայր» տիտղոսով էին մեծարում, բավական է հիշել անձի պաշտամունքի տարիները: Հեղինակն այս առածի միջոցով ի ցույց է դնում երևույթի ողջ այլանդակությունը, անարժան և անբարո առաջնորդների մեծարումը ամբոխի կողմից:

Նույն թագավորի զագրելի կերպարն են բացահայտում սահման բառի ուղղակի և փոխաբերական կիրառությունները նույն առածի շրջանակում. «Թագաւորին երկիրը սահման ունի, երկրին մէջ սակայն թագաւորին յիմարութիւններուն համար սահման գոյություն չունի» (139):

Իսկ ո՞ւմ հետ կարելի է համեմատել թագավորին: Հարցին հեղինակը պատասխանում է առածով, որտեղ այս անգամ կիրառում է համեմատություն, ընդ որում առավելական համեմատություն: Համեմատության այս տեսակի դեպքում «համեմատվող առարկան իր հատկանիշներով ավելի բարձր է ներկայացվում համեմատյալից (մերժողականի դեպքում՝ ավելի ցածր)»¹⁵:

Եվ ուրեմն, ումի՞ց է ավելի բարձր կամ դրական թագավորի նկարագիրը. «Թագաւորը բաւական բարի է, իբրեւ դեւերու ներկայացուցիչ» (139): Կարծում ենք՝ մեկնաբանություններն ավելորդ են:

¹⁴ Պողոսյան 1991, 185:

¹⁵ Պողոսյան 1991, 14:

Եզրակացություններ

Եթե փորձենք ամփոփել այս համառոտ քննությունը, ապա պիտի փաստենք, որ ֆրանսահայ գրող Նշան Պեշիկթաշյանի երգիծավեպերում առած-ասացվածքները, ինչպես նաև ժողովրդական խոսքերը, դարձվածների տարբերակները, հեղինակային նորակազմություն հանդիսացող առածները ունեն առանձնահատուկ դեր ու կշիռ: Ոճական առումով այս միավորների հնարավորությունները շատ մեծ են, և հաճախ սրանց առկայության հետ է կապված խոսքի արտահայտչականությունը, հագեցվածությունը, ազդեցիկությունը և այլ արժանիքներ: Նաև սրանց միջոցով է գեղարվեստական ստեղծագործություն ներթափանցում ժողովրդական բառ ու բանը՝ հյութեղ ու աշխույժ, ու հատկապես կերպարների խոսքը դարձնում ավելի բնական, կենդանի ու շարժուն: Պայմանավորված իրենց այլաբանական նշանակությամբ՝ առած-ասացվածքները մեծ պատկերավորություն են հաղորդում խոսքին, որը Նշան Պեշիկթաշյանի երգիծավեպերում ունի երգիծական բնույթ՝ հումորայինից մինչև կծու հեգնական:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց 1997, Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, տպ. Մեծ Բրիտանիայում, 1450 էջ:

Բեդիրյան Պ. 2011, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1410 էջ:

Թումանյան Հովհ. 1958, Երկեր, հատոր երկրորդ, Երևան, Հայպետհրատ, 510 էջ:

Ղանալանյան Ա. 1960, Առածանի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 400 էջ:

Մուրվալյան Ա. 1959, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայականություն (ուսումնասիրություն), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 252 էջ:

Պարոնյան Հ. 1954, Ընտիր երկեր, գիրք 1, Երևան, Հայպետհրատ, 576 էջ:

Պեշիկթաշյան Ն. 1942, Երգիծավեպեր, Փարիզ, Մատենաշար «Արմենական մշակոյթ», թիւ 2, 160 էջ:

Պողոսյան Պ. 1991, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 396 էջ:

Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2020, գիրք իր, Մկրտիչ Ա. Խրիմեան, Կաթողիկոս Ամենայն հայոց, փաստաթղթերի ժողովածու, էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 792 էջ:

Андреев Н. 1938, Русский фольклор, Москва-Ленинград, «Печатный двор», 655 с.

Пелевина Н. 1980, Стилистический анализ художественного текста, Ленинград, «Просвещение», 272 с.

ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПОСЛОВИЦ И ПОГОВОРК В САТИРИЧЕСКИХ РОМАНАХ НШАНА ПЕШИКТАШЛЯНА

АРАКЕЛЯН К.

Резюме

Ключевые слова: сатира, роман, язык, речь, пословица, поговорка, стиль.

Армянская сатирическая литература имеет богатые традиции. Сатирический жанр достиг своего апогея в XIX–XX вв., в частности, в творчестве западноармянских писателей Акопа Пароняна и Ерванда Отяна. Традиции западноармянской литературы были переняты писателями Диаспоры и в том числе Ншаном Пешикташляном, который более известен как сатирик.

Сатирические романы Ншана Пешикташляна изобилуют пословицами и поговорками, которые имеют большую стилистическую ценность, поскольку придают его языку особую образность и оттенок народной речи.

LINGUO-STYLISTIC PROPERTIES OF PROVERBS AND SAYINGS IN THE SATIRICAL NOVELS OF NSHAN PESHIKTASHLIAN

ARAKELYAN K.

Summary

Keywords: satire, novel, language, speech, proverb, saying, style.

Armenian satirical literature has rich traditions and deep roots. The genre of satire reached its apogee in the 19th – 20th centuries, particularly in the works of such Western Armenian writers as Hagob Paronian and Yervand Otian. Being one of the most brilliant satirists in the Diaspora literature, Nshan Peshiktashlian followed the legacy of the Western Armenian writers.

Satirical novels by Nshan Peshiktashlian are rich in proverbs and sayings, which are of significant stylistic value as they endow his works with unique features of figurativeness and some elements of vernacular.